THE WORLD BANK

Working for a World Free of Poverty

մամուլի հաղորդագրություն

մամուլի հաղորդագրություն
No: 2012/130/ECA

Ոռոգման համակարգերի վերականգնումը Հայաստանում մեծապես կաջակցի ավելի քան 88.000 գյուղացիների

Ենթակառուցվածքները վերականգնելով՝ Համաշխարհային բանկն աջակցում է աշխատատեղերի ստեղծմանը գյուղերում

Վաշինգտոն, 25-ը հոկտեմբերի 2011 թ. – Այսօր Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհուրդը հաստատեց 18 միլիոն ԱՄՆ դոլար վարկի հատկացումը Հայաստանին՝ **«Ոռոգման համակարգերի հրատապ վերականգնման ծրագրի»** լրացուցիչ ֆինանսավորման համար: Այս ընդլայնումն ու վերակառուցումը կբարձրացնի ջրօգտագործման արդյունավետությունը ծրագրում ընդգրկված ոռոգման համակարգերում, ինչպես նաև անմիջականորեն կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը Հայաստանի 7 մարզերում:

Վերականգնման աշխատանքներ կիրականացվեն 50 կմ ընդհանուր երկարությամբ մայր ջրանցքներում և երկրորդային ջրանցքներում, որոնք սպասարկում են 52.000 հա հողատարածքներ Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Արարատի և Արմավիրի մարզերում, ինչը հնարավոր կդարձնի ջրի կորուստների նվազեցումը մոտ 34,4 միլիոն խորանարդ մետրով և հնարավորություն կստեղծի վերականգնելու ոռոգումը մոտ 4.700 հա հողատարածքներում: Բացի այդ, ևս 63 կմ ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնումը Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերի 19 համայնքներում կնվազեցնի ջրի կորուստը 9,9 միլիոն խմ-ով, կբարելավի գործող ոռոգման ջրի ծառայության մակարդակն ավելի քան 2.500 հա հողատարածքներում և հնարավորություն կստեղծի վերականգնելու ոռոգումը 1.760 հա հողատարածքներում: Տարեկան կտրվածքով ջրի խնայողությունը (44,2 միլիոն խմ), որը համարժեք է ջրի 1,4 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսական արժեքին, հնարավորություն կտա վերականգնել ոռոգումը 6.500 հա նախկինում ոռոգվող հողատարածքներում:

«Ծրագիրն ուղղակիորեն կաջակցի ավելի քան 88.000 գյուղացիների՝ բարձրացնելով նրանց հողատարածքների եկամտաբերությունն ու նրանց եկամուտները,- **ասաց Հարավային Կովկասում Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրեն Ասադ Ալամը**: *-Այս ծրագիրը սատարում է գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանն ու կայուն աճի խթանմանն ուղղված կառավարության ջանքերին»:*

«Ոռոգման համակարգի վերականգնումը նաև կապահովի մոտ 7.000 մարդ -ամիս ժամանակավոր աշխատատեղ և կստեղծի գյուղատնտեսության ոլորտում մոտ 2.100 մշտական աշխատատեղ ավելացնելու հնարավորություն,- **ասաց Համաշխարհային բանկի Երևանի**

գրասենյակի տնօրեն Ժան-Միշել Հապին: - *Աշխատատեղերի ստեղծումն այս ծրագրի կարևոր բաղադրիչներից է»:*

Մայր ծրագրով վերականգնվել են ջրանցքների մոտ 89,4 կմ հատվածներ՝ ներառյալ 57,7 կմ Թալինի և 31,7 կմ Արմավիրի մայր ջրանցքներից: Ջրի կորուստը նվազել է 96,9 միլիոն խորանարդ մետրով՝ եղած շուրջ 114 միլիոն խմ-ից: Շինարարության ընթացքում ստեղծվել էր 11.379 մարդ-ամիս ժամանակավոր աշխատատեղ (նախատեսված 9.000-ի փոխարեն), որի 67 տոկոսը՝ որակավորում չպահանջող աշխատանքներ, որոնցից առաջին հերթին օգտվեցին առավել անապահով ընտանիքները: Առավել երակարաժամկետ նվաճումներից է ոռոգման վերականգնումը մոտ 8.000 հա հողատարածքներում՝ ի շահ շրջակա տարածքների փոքր գյուղացիական տնտեսությունների: Ակնկալվում է, որ ժամանակի ընթացքում սա խթան կհանդիսանա ավելի բարձրարժեք մշակաբույսերի կուլտիվացման համար, ինչը պետք է հանգեցնի լրացուցիչ երկարաժամկետ աշխատատեղերի ստեղծմանը և առավել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը:

«Այս ծրագիրը նաև կամրապնդի ոռոգման ոլորտում ձեռք բերված կայուն առաջընթացը՝ բարելավելով ջրամատակարարումն ու ջրօգտագործման կառավարումը,- **հավելեց ծրագրի ղեկավար Ջուզեպպե Ֆանտոցին:** - *Ծրագիրը կամրապնդի այն հաստատությունները, որոնք առավել կարևոր դեր են կատարում ընթացիկ բարեփոխումներում, հատկապես՝ ջրօգտագործողների ընկերությունների վերապատրաստման միջոցով»:*

Ծրագիրը նախապատրաստվել է «Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիա» (ՀՄԿ) ծրագրի հետ սերտ համագործակցությամբ, որը մշակել է շինարարական աշխատանքների նախնական տեխնիկական նախագծերը:

Ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը 21,6 միլիոն ԱՄՆ դոլար է, որից Հայաստանի կառավարությունը կապահովի 3,4 միլիոն ԱՄՆ դոլար, ևս 0,2 միլիոն դոլար կապահովեն շահառուները (այս գումարն արդեն հավաքվել է ՀՄԿ ծրագրի շրջանակներում): ՎՋ ՄԲ-ի տրամադրած վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից 10 տարին՝ արտոնյալ ժամկետով:

1992թ. Համաշխարհային բանկին և 1993թ. Միջազգային զարգացման ընկերակցությանը (ՄԶԸ) Հայաստանի անդամակցությունից հետո՝ նրա նկատմամբ ՀԲ և ՄԶԸ ստ անձնած հանձնառությունների ընդհանուր գումարը կազմում է 1 միլիարդ 506 միլիոն ԱՄՆ դոլար:

Կոնտակտներ՝
Երևանում՝ Վիգեն Սարգսյան (374 10) 520-992, vsargsyan@worldbank.org
Վաշինգտոնում՝ Ջոնաթան Դեյլի (202) 473-2588, jdaly@worldbank.org
Հեռարձակման հարցերով՝ Նատալյա Սիեսլիկ, (202) 458-9369, ncieslik@worldbank.org

Հայաստանում Համաշխարհային բանկի գործունեության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք http://www.worldbank.org.am կայքէջը: